ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԼԵՐՄՈՆՏՈՎՈ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Լերմոնտովո գյուղը գտնվում է Հայաստանի Լոռու մարզի Գուգարքի շրջանի ամենացուրտ գոտում 1810կմ ծովի մակերեսից բարձրության վրա : Գյուղը, որը սկզբից անվանվել է Վոսկրեսենովկա, հիմնվել է 1840 թ-ին Ռուսաստանի Տամբովի մարզից "մոլոկանների" մոտավորապես յոթ ընտանիքների աքսորման հետևանքով : Աքսորված ընտանիքները հիմնավորվել են այստեղ, և այժմ կազմում են բնակչության 80%-ը: Համայնքում ապրում են նաև հայեր՝ 15% և եզդիներ՝ 5%: Ներկայիս Լերմոնտովոն իրենից ներկայացնում է բավականին զարգացած համայնք՝ 2001 թ-ին սոցիալական ներդրումների ծրագրով անց է կացվել ջրագիծ, 2006 թ-ին գյուղը գազաֆիկացվել է, 2010թ-ին լուծվել է համայնքի փողոցների լուսավորության հարցը: Համայնքում գործում է Մշակույթի կենտրոնը, որտեղ կազմակերպվում են տարբեր միջոցառումներ , գործում է նաև գրադարան : Գյուղում առկա է միջնակարգ դպրոցը՝ որտեղ կան և հայկական և ռուսական դասարաններ, ուր հաճախում են և Լերմոնտովոյի և Անտառաշենի երեխաները: Դպրոցը հիմնովին վերանորոգվել է պետական բյուջեի միջոցներով:

2011 թ-ի սկզբից կազմակերպվել է գյուղի աղբահանման հարցը , տեղադրվել են ծածկականգառներ: Առաջիկա պլաններում է գյուղամիջյան ճանապարհների կապիտալ վերանորոգումը: 2017 թ-ին Համաշխարհային բանկի միջոցներով Հայաստանի Տարածքային Զարգացման հիմնադրամի օգնությամբ վերակառուցվեց և վերաբացվեց համայնքի մանկապարտեզը, որից օգտվում են նաև Անտառաշենի բնակիչները:

Անտառաշեն գյուղ

Մակերես՝ 22.0կմ2

Բնակչություն՝ 247

Գյուղը գտնվում է ծովի մակերեսից 1900մ բարձրության վրա, շրջապատված է կանաչազարդ անտառներով, բարձրադիր լեռներով: Լեռներից հոսող գետը հոսում է անմիջապես գյուղի ջրամբարը, որը բնակչությանը բավարարում է ամբողջությամբ: Համայնքի բնակիչները նախկինում զբաղվել են գազանաբուծությամբ, քանի որ գյուղում կար գազանաբուծական մեծ տնտեսություն, որը երկար տարիներ միակն է եղել նույնիսկ անդրկովկասյան երկրներում, ուր արտահանվել է ոսկեփայլ կզաքիսի մորթի: 1990-1994 թ-ին տնտեսությունը փլուզվել է: Անգամ ամենուր կատարվող սեփականաշնորհման գործընթացը համայնքում չիրականացավ: Համաձայն ՀՀ Գերագույն խորհրդի 31 հոկտեմբերի 1991թ. որոշման : Անտառաշենը առանձնացել է Լերմոնտովոյի գյուղական խորհրդից, դարձել ինքնուրույն: Եվ միայն 2021 թ-ին նորից միավորվեց Լերմոնտովո համայնքի հետ:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Ծովի մակարդակից 1825 մ բարձրության վրա, Աղստև գետի ձախ կողմում: Գտնվում է մարզկենտրոն Վանաձորից մոտ 11 կմ հարավ-արևմուտք:Գյուղը, որն ի սկզբանե կոչվել է Վոսկրեսենովկա, հիմնվել է 1840 թվականին Ցարական Ռուսաստանի Սարատովի և Տամբովի նահանգներից տեղափոխված ռուսների կողմից: Լերմոնտովո է վերանվանվել 1941 թվականի հուլիսի 5-ին: Աքսորված ընտանիքները հիմնավորվել են այստեղ, և այժմ կազմում են բնակչության 80%-ը: Համայնքում ապրում են նաև հայեր՝ 15% և եզդիներ՝ 5%: Բնակչությունն զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի և կերային կուլտուրաների մշակությամբ:

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	70-90
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	-10
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	18

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) Լերմոնտովո 1.2)Անտառաշեն	 0 3
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Գուգարք
3.Համայնքի կենտրոնի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	120
3.2) մարզկենտրոնից (կմ)	17
3.3) պետական սահմանիցուղիղ գծով (կմ)	120
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	7
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	3
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	17
4.Համայնքի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1820
5.Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	36,06 / 3606,78
6.Սահմանակից համայնքների անվանումները	Փամբակ, Վանաձոր
7.Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	lermontovogjuxapetaran@mail.ru
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	lermontovo.am
9.Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	091 91 26 40
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	-
11.Համայնքի հեռախոսային կոդը	0
12.Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	Այո/1
13.Համայնքապետարանի փոստային դասիչը	2034

14.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	1130
2. Գրանցված ծնունդների քանակը	12
2.Մահացության դեպքերի քանակը	10
3.Ամուսնությունների քանակը	7
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	260
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	27
7. Կենսաթոշակառուների քանակը	109
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	5

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը ($մ^2$)	30405
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	1
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	409

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	2659,25
2. Բնակավայրերի հողեր (հա)	158,24
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	32,23
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյետներ	10,22
5. Հատուկ նշանակության	5,21
6. Հատուկ պահպանվող տարածքների	6,18
7. Անտառային	731,56
8. Ջրային	3,89
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1025
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	122
11. Խոզերի գլուխաքանակը	0
12. Գյուղատնտեսական տեխնիկա	27
12.1 տրակտորներ (քանակը)	27
12.2 կոմբայններ (քանակը)	0
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	260

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	4
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	12,54
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	0
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	4
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	4
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0

7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	6
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	այո

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	10
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	4
2.Վարչական ղեկավարների թվաքանակը	1
3. Ավագանու անդամների օրենքով սահմանված թվաքանակը	5
4. Ավագանու անդամների փաստացի թվաքանակը	5

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**
Համայնքային ճանապարհների վերանորոգում/վերակառուցում	Տարվա սուբվենցիոն ծրագրով
Համայնքի ջրագծի վերանորոգում	Տարվա սուբվենցիոն ծրագրով